ՎՐԱՑ–ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐԸ ԹԱԹԱՐ–ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԲՌՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ 1247—1249 ԹԹ.

Հ. Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Չինգիզ խանի երրորդ որդին՝ Ուգեդեյը (1229—1241 ԹԹ.), 1229 թ. մոնղոլական ղուռուլթայի (ցեղային առաջնորդների խորհրդի) կողմից հռչակվելով մեծ խան՝ շարունակեց կենսագործել մոնղոլական ավագանու նվաճողական պլանները։ Այդ նպատակով կազմակերպվեց Զարմաղանի արշավանքը Խորեզմի սուլթան Ջալալ էդ-Դինի դեմ։ Վերջինս գլխավոր խոչընդոտն էր վերոհիշյալ պլանների իրագործման ճանապարհին։

1230—1231 ԹԹ. ընթացքում Զարմաղանը հաջողությամբ կատարեց իր խնդիրը։ Եվ հենց այդ ժամանակներից էլ մոնղոլական բանակը մնաց Իրանում և Մուղանի բարեբեր դաշտավայրում։ Նշված տարածքում սկիզբ դրվեց մոնղոլական տիրապետությանը։

1235 թ. հերթական ղուռուլթայի որոշման համաձայն վերը նշված մոնղոլական բանակը, լրացուցիչ օգնական ուժեր ստանալով, սկսեց ողջ Անդրկովկասը նվաճելու ծրագրի իրականացումը։ Եվ 1236—1245 ԹԹ. ընթացքում նախ Զարմաղանի և ապա Բաչու Նոյինի հրամանատարությամբ այդ բանակը նվաճեց ոչ միայն Անդրկովկասը, այլև Փոքր Ասիայի արևելյան շրջանները։ Հպատակեցված երկրներից ստեղծվեցին մոնղոլական կենտրոնական պետության կուսակալություններ։ Վրաստանը, Հայաստանը, Առանը, Շիրվանն ու Ատրպատականը կազմեցին մեկ կուսակալություն, որի կառավարիչն էր Զարմաղանը։ Այս կուսակալության ներսում էլ Վրաստանն ու Զաքարյան Հայաստանի իշխանությունը կազմեցին վարչական մեկ ինքնուրույն միավոր, որը մոնղոլներն անվանեցին Գյուրջիստանի վիլայեթ։ Նրանում վրաց թագավորներն առաջնություն ունեին տեղական ավատատերերի հանդեպ։

Գույուկ խանի (1246—1248 ԹԹ.) իշխանության գլուխ անցնելու կապակցությամբ Մոնղոլիայի մայրաքաղաք Ղարաղորում էին հրավիրվել մոնղոլական ավագանու և նվաճված երկրների ղեկավար ներկայացուցիչները։ Դրանց թվում էին ինչպես վրացական գահի հավակնորդ երկու Դավիթները, այնպես էլ երկրի աթաբեկ ու ամիրսպասալար Ավագ Զաքարյանը[1]*։*

Ահա այս ժամանակ էլ վախճանվեց Ռուսուդան թագուհին։ Երկիրը գտնվում էր անտերունչ վիճակում։ Օգտվելով դրանից, ինչպես նաև մոնղոլական զորքերի անդադրում արշավանքներից, որոնց անպայմանորեն մասնակ-

---

[1] *Վրաց ժամանակագրություն. թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի. Երևան, 1974, էջ 80—81։* Juvaini. 'Ala-ad-Din 'Ata-Malik. The history of the world conqueror. Translated from the text of Mirza Muhammad Qazvini by John Andrew Boyle. Vol. I, Manchester, 1958, p. 250. *Վերոհիշյալ երկու Դավիթներից մեկը Գեորգի Լաշա (1213—1222 ԹԹ.) թագավորի որդին էր, որը պատմության մեջ հայտնի է Ուլու (մոնղոլերեն՝ մեծ) Դավիթ (1246—1270 ԹԹ.) անունով, իսկ մյուսը Գեորգի Լաշայի քույր Ռուսուդան (1222—1245 ԹԹ.) թագուհու որդին էր։ Վերջինս պատմությանը հայտնի է Դավիթ Նարին (մոնղոլերեն՝ կրտսեր) անունով։ Նրանք երկուսն էլ վրացական գահին հաստատվեցին Գույուկ խանի կողմից։ Ընդ որում առաջնությունը վերապահվել էր Ուլու Դավթին (տե՛ս* Juvaini, I, p. 257, *Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն հայոց. Երևան, 1961, էջ 316)։*

ցում էին նաև վրաց-հայկական զինական ուժերը[2], Հայաստան և Վրաստան սկսեցին ներխուժել թյուրքական զորքերը։ Սակայն վերջիններս, չնայած երկրի ծանր կացությանը, այնուամենայնիվ արժանի հակահարված ստացան վրաց-հայկական ուժերի կողմից[3]։

Մոնղոլական արշավանքները դժվարին պայմանների մեջ էին դրել երկրամասը։ Օտարերկրյա տիրապետության հենց սկզբից հայ և վրաց ժողովուրդներն ընկան ծանր հարկային լծի տակ։ Ու թեև հայկական ֆեոդալական իշխանությունները հիմնականում պահպանել էին իրենց գոյությունն ու ներքին ինքնավարությունը, այնուամենայնիվ ենթակա էին մոնղոլական պաշտոնեության բռնություններին ու կամայականություններին[4]։ Այս ամենը մեծ դժգոհություն առաջացրեց վրաց-հայկական ֆեոդալական դասի մեջ։ Տիրող դրության թելադրանքով և երկրի քաղաքական անկախությունը վերականգնելու պայքարը նախապատրաստելու նպատակով էլ տեղի ունեցավ ավատատերերի հավաքը Կոխտասթավիում[5]։ Այստեղ եկան Արևելյան Վրաստանի, Հյուսիս-արևելյան Հայաստանի, ինչպես նաև Արևմտյան Վրաստանի իշխանները։ Դրանց թվում վրաց ժամանակագիրը հիշատակում է Եգարսլանին, Ցոտնե Դադիանիին, Վահրամ Գագեցուն, Շոթա Կուպարին, Ղվարղվարեին, Թորելի Գամերկելին, Սարգիս Թմոգվեցուն[6]։ Իշխանները, վրաց թագավորի բացակայության պայմաններում, որոշեցին վերջ տալ միջֆեոդալական հակասություններին և միաբանելով կռվել թշնամու դեմ։ Պայմանավորվածություն ձեռք բերվեց հավաքվել Քարթլիում։ Ապա Արևմտյան Վրաստանի իշխանները հեռացան Կոխտասթավիից[7]։

Բայց հենց այդ ժամանակ էլ մոնղոլները տեղեկացան հավաքի մասին և Բաչուի ու Անգուրգի գլխավորությամբ եկան Կոխտասթավի և հանդիպեցին

---

2 Կիրակոս Գանձակեցի, էջ 292—294։ Рашид ад-Дин. Сборник летописей. Т. II, пер. с персидского Ю. П. Верховского. М.—Л., 1960, с. 125; Վրաց ժամանակագրություն, էջ 93։ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (ԺԳ դար). կազմեց Ա. Ս. Մաթևոսյան (այսուհետև՝ ԺԳ). Երևան, 1984, էջ 228—229։ Ջուվեյնին վկայում է, որ Գույուկ խանի իշխանության դլուխ անցնելուց հետո որոշում ընդունվեց տարբեր ուղղություններով արշավանքներ կազմակերպել։ Այդ արշավանքներից մեկն էլ ուղղված էր դեպի արևմուտք՝ իսմայիլական աղանդավորների դեմ։ Տվյալ արշավանքին պարտավոր էին զորք տրամադրել և մասնակցել հպատակ երկրները (Juvaini, I, p. 256)։ Հասկանալի է, որ դրանց թվում էին նաև վրացիներն ու հայերը

3 Վրաց ժամանակագրություն, էջ 91—93։

4 Տե՛ս С. А. Козин. Сокровенное сказание: Монгольская хроника 1240 г. Т. I, М.—Л., 1941, с. 193—194; Կիրակոս Գանձակեցի, էջ 263—264։ Մաղաքիայ արեղայի Պատմութիւն վասն ազգին Նետողաց (այսուհետև՝ Գրիգոր պատմիչ). Ս. Պետերբուրգ, 1870, էջ 20. Դիվան հայ վիմագրության. պրակ V, Երևան, 1982, էջ 183։ Juvaini, I, p. 257. ԺԳ, էջ 215—247։

5 Իվ. Ջավախիշվիլին գտնում է, որ ապստամբություն նախապատրաստելու հիմնական պատճառը ոչ թե հարկերն էին և կամ էլ մոնղոլների արշավանքներին մասնակցելը, այլ այն, որ սույն իրադարձություններից մի որոշ ժամանակ առաջ՝ վրացական պետության հզորության ժամանակաշրջանում, վրացիները մի շարք երկրներ իրենց էին հնազանդեցրել։ Ուստի, մոնղոլական թեկուզև թեթևագի լծի առնայությունը պետք է հանդուրժելի չլիներ նրանց, և վերջիններս պետք է իրենց ազատության և անկախության երազանքը կորցրած չլինեին (տե՛ս ივ. ჯავახიშვილი. ქართველი ერის ისტორია, წიგნი მესამე, თბ. 1956, გვ. 137—138. Ն. Բերդենիշվիլին տվյալ ժամանակաշրջանի մոնղոլական տիրապետության ծանրությունը համարել է ոչ թե հարկերը, այլ մոնղոլական արշավանքներին մասնակցելու պարտականությունը (Н. Бердзенишвили. Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII—XVI вв.). Тбилиси, 1938, с. 8.

6 Վրաց ժամանակագրություն, էջ 93։ Ըստ Պ. Մուրադյանի՝ վերջինս Ջաքարյան տոհմից էր (նույն տեղում, Դանթագրություններ, էջ 198)։

7 Նույն տեղում, էջ 93։

մնացած իշխաններին։ Քանի որ զորքն արդեն ցրված էր, վերջիններս չկարողացան դիմադրել, և մոնղոլները նրանց բոլորին կալանավորելով տարան Շիրակավան։ Հարցաքննության ժամանակ տրված այն հարցին, թե ինչո՞ւ են բոլոր իշխանները հավաքվել, ձերբակալվածները պատասխանեցին, թե հավաքը հարկերը կարգավորելու նպատակով էր։ Բազմօրյա հարցաքննության ժամանակ իշխանները միշտ տալիս էին նույն պատասխանը[8]։

Երբ ապստամբության պայմանավորված ժամանակը մոտեցավ, Յոտնե Դադիանին զորքով գնաց Սամցխեի և Ղաղոյի միջև գտնվող Բկինսջվարի կոչվող վայրը։ Տեղեկանալով ձերբակալված իշխաններին Անի քշելու մասին, Յոտնեն զորքը ետ ուղարկեց և երկու մարդկանց հետ գնաց այնտեղ։ Տեղ հասնելով նա միացավ պատժի ենթարկված ավագներին։ Մոնղոլ հրամանատարները կանչեցին Յոտնեին և հարցրին նրա վարքագծի պատճառների մասին։ Նա էլ վկայեց, թե հարկերը հավաքելու գործը կարգավորելու համար էին հավաքվել։ Ուստի, եթե մեռնելու է, ապա պետք է ինքն էլ մեռնի մյուսների հետ, եթե ապրելու է՝ ապրի մյուսների հետ, որովհետև ինքն էլ մասնակից է եղել խորհրդակցությանը։ Ի վերջո, ըստ վրաց ժամանակագրի, հավատալով իշխաններին՝ մոնղոլները նրանց աղատ արձակեցին[9]։

Սակայն հազիվ թե ձերբակալվածներին աղատելու հարցում Յոտնե Դադիանիի վարքագիծը այնպիսի էական նշանակություն ունենար, ինչպես ձրգտում է ցույց տալ վրաց ժամանակագիրը։ Ավելի հավանական է, որ 1247 թ. Ղարաղորումից վերադարձած Ավագի միջնորդությամբ է, որ ազատվել են ըմբոստները։ Այդ մասին քիչ հետո։

Ֆրանցիսկյան միաբանության անդամ Պլանո Կարպինին, որը 1245—1247 թթ. ընթացքում գնացել էր Մոնղոլիա և վերադարձել, իր հերթին վկայություն է թողել վրացիների[10] ապստամբական տրամադրությունների մասին[11]։

Իվ. Ջավախիշվիլին ենթադրում է, որ Կոխտասթավիի անցքերը պետք է 1247 թ. եղած լինեն[12]։ Վրաց հետազոտող Յու. Սիխարուլիձեն գտնում է, որ Կոխտասթավիի դեպքերը տեղի են ունեցել 1245 թ.[13]։ Այդ կարծիքի հիմքն այն է, որ Կոխտասթավիի հավաքի մասին խոսելուց հետո վրաց ժամանակագիրը նշում է Լաշայի որդի Դավթին գտնելու և Ղարաղորում ուղարկելու մասին։ Սակայն հայտնի փաստ է, որ սույն աղբյուրի մեջ ժամանակագրական կարգը խիստ խախտված է։ Վրաստանի պատմության ուրվագծերում նշվում են 1246 կամ 1247 թ.[14]։

Ավելի հավանական է վերոհիշյալ անցքերը թվագրել 1247-ի ամռանով։ Հօգուտ դրան են խոսում հետևյալ փաստերը։ Նախ, մոնղոլական զորքերը ողջ 1245 թ. ընթացքում գտնվում էին արշավանքների մեջ[15]։ Եվ հայտնի է, որ այդ

---

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, էջ 94—95։

10 Հասկանալի է, որ վրացիներ ասելով ճանապարհորդը նկատի է ունեցել նաև Ջաքարյան Հայաստանի իշխանական դասն ու բնակչությունը։

11 Д. И. Языков. Собрание путешествий к татарам и другим восточным народам. СПб., 1825, с. 191. Իվ. Ջավախիշվիլու կարծիքով Պլանո Կարպինիի վկայությունը վերաբերում է Կոխտասթավիի հավաքին։ Անվանի գիտնականը միևնույն ժամանակ կարծում է, որ ֆրանցիսկյան միաբանը այդ մասին պետք է տեղեկացած լիներ Ղարաղորումում գտնվող վրացիներից կամ էլ մոնղոլ ղեկավարներից՝ դեպքերից քիչ հետո (տե՛ս ივ. ჯავახიშვილი, III, გვ. 138)։

12 ივ. ჯავახიშვილი, III, გვ. 138.

13 Ю. Сихарулидзе. Борьба грузинского народа против татаро-монгольского владычества. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. Тбилиси, 1969, с. 26.

14 საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. III, თბ. 1979, გვ. 555—556.

15 Կիրակոս Դանձակեցի, էջ 292—293։

արշավանքներին անպայման մասնակցում էին վրաց-հայկական զորքերը։ Այնպես որ 1245 թ. բացառվում է։ Չպետք է մոռանալ, որ ըստ նույն վրացական աղբյուրի տեղեկության՝ Կոխտասթավիի հավաքին մասնակից է եղել ի թիվս մյուսների, նաև Զաքարյաններից Սարդիս Թմոգվեցին, որը նշվում է նաև որպես Լաշայի որդուն Ղարաղորում ուղեկցող[16]։ Եթե ընդունենք, թե Կոխտասթավիի հավաքը վերաբերում է 1245 թ., ապա առաջ է գալիս մի հակասություն։ 1245 թ. ամռան վերջերին, ի թիվս մյուսների, Գույուկ խանի գահ բարձրանալու կապակցությամբ[17] Ղարաղորումում գտնվում էին երկու Դավիթները[18], ինչպես նաև Սարդիս Թմոգվեցին։ Այդ դեպքում վերջինս ինչպե՞ս կարող էր մասնակցել վերոհիշյալ հավաքին։ Գալիս ենք այն համոզման, որ Սարդիս Թմոգվեցին Ղարաղորումից վերադառնալուց հետո միայն (որը կարող էր եղած լինել 1247 թ. սկզբին)[19] կարող էր մասնակցել Կոխտասթավիի հավաքին։

Ահա այս ժամանակ՝ 1247 թ. ամռանն էր, որ Ավագ Զաքարյանը վերադարձավ Ղարաղորումից։ Այս իրողության օգտին է խոսում դոմինիկյան միաբանության անդամ Ասցելինը, որը 1247 թ. մայիսի 24-ից մինչև հուլիսի 25-ը գտնվել է Բաչուի զորաբանակում[20] և վկայում է, որ Ավգուտ (Ավագ—Հ. Ս.) անունով մի մարդ էր գալու Մոնղոլիայից, որը նշանակվել էր Վրաստանի կառավարիչ և նրան անհամբերությամբ էին սպասում։ Վերջապես նա գալիս է և Բաչուի կողմից լավ ընդունելության արժանանում[21]։ Ամենայն հավանականությամբ ձերբակալված իշխանները հենց այս ժամանակ՝ 1247 թ. ամռանը, Ավագի միջնորդությամբ էլ ազատվել են։ Ինչպես հետո կտեսնենք, նման մի միջնորդություն էլ եղել է 2 տարի անց՝ 1249 թ. վրաց-հայկական առաջին ապստամբությունից հետո։

Անդրկովկասում ստեղծված ծանր դրությունն առավել վատթարացավ 1247—1248 թթ. Մերձավոր Արևելքում, այդ թվում և Հայաստանում անցկացված հարկահանության կապակցությամբ[22]։ Հարկային դաժան քաղաքականությունը թելադրված էր մոնղոլական լայնածավալ կայսրության պահպանման շահերով։ Թե որքան ծանր էր մոնղոլների հարկահանությունը, վկայում են ժամանակի պատմիչները[23]։

Հարկահանության դեմ մեծ դժգոհություն է առաջանում Լաչենում։ Բուղան մեծ զորքով շարժվում է այնտեղ, քարուքանդ անում տեղի կենտրոնական ամ-

---

16 Վրաց ժամանակագրություն, էջ 96, 99։

17 Այն տեղի է ունեցել 1246 թ. օգոստոսի վերջերին (տե՛ս Путешествия в восточные страны Плано Карпини и Рубрука. М., 1957, с. 76, 219)։

18 Рашид ад-Дин, II, с. 118—119.

19 Ղարաղորումից մինչև Անդրկովկաս վերադառնալը որպես կանոն մի քանի ամիս էր տևում։ Եթե նկատի առնենք, որ Սարգիս Թմոգվեցին ամենաշուտը Գույուկ խանի գահ բարձրանալուց հետո՝ 1246 թ. աշնանը կարող էր վերադառնալ, ապա 1247 թ. սկզբին նրա Հայրենիք հասնելու ենթադրությունը հավանական է դառնում։ Իսկ վրաց ժամանակագրի՝ Կոխտասթավիի վերոհիշյալ դեպքերը նկարագրելիս տեսանք, որ այն եղել է շոգ եղանակին՝ ամռանը։ Հետևաբար 1246 թ. նույնպես բացառվում է։

20 R. Grousset. L'Empire des steppes. Attila. Gengis khan. Tamerlan. Paris, 1960, p. 421.

21 Voyages de frère Ascelin et ses compagnons vers les Tartares. Տե՛ս P. Bergeron. Voyages faits principalement en Asie dans les XII, XIII, XIV et XV siècles. A la Haye, 1735, t. I, p. 78—79; Д. И. Языков. Указ. соч., с. 253—257; Վրաց ժամանակագրություն, էջ 100։ Վրաց ժամանակագրի մոտ Ուլո (Հուլավու—Հ. Ս.) անվանումը թյուրիմացություն է։ Ավագը վախճանվել է 1250 թ.՝ մինչ Հուլավուի գալը։ Նա ընդունվել է Իալու Նոյինի կողմից։

22 Рашид ад-Дин, II, с. 120; Juvaini, II, p. 512.

23 Կիրակոս Գանձակեցի, էջ 312—313։ Գրիգոր պատմիչ, էջ 20։

բոցը՝ Խոխանաբերդը[24]։ Ջնայած Կիրակոս Գանձակեցին այս ծանր միջադեպը փորձում է բացատրել Խաչենի գահերեց իշխան Հասան-Ջալալի քրիստոնեական բարեպաշտության հանգամանքով, որն, իբր, չէին կարող հանդուրժել մահմեդական Բուղան ու նրա մոլեռանդ հարկահանները, մենք համոզված ենք, որ այս պատճառաբանությունը պակասավոր ու միակողմանի է, և որ մոնղոլ բռնավորներին Խաչենում վայրագության պետք է մղած լինի տեղացիների ընդվզումը ծանր հարկահանության դեմ։ Ըմբոստները պատսպարվել էին անառիկ Խոխանարերդում, որի դեմ մոնղոլ ասպատակիչները ոխ ունեին դեռևս 1230-ական թթ., երբ մեծ դժվարությամբ կարողացան կոտրել նրա պաշտպանների դիմադրությունը։ Ուստի նրանք այժմ ստիպված էին հիմնահատակ խորտակել ոչ միայն Խոխանաբերդը, այլև Դեղը, Ծիրանաքարը և մյուս ամրոցները։ Իսկ Հասան-Ջալալը շատ ոսկի ու արծաթ տալով հազիվ փրկվեց մահից[25]։

1248-ին դրությունն այն աստիճանի էր սրվել, որ նույնիսկ Ավագ Զաքարյանը դուրս եկավ հարկահան Բուղայի դեմ «բազում զօրոք»[26]։ Վերջինս, տեսնելով իր դիմաց կանգնած մեծաքանակ զորքը, փորձեց մեղադրել Ավագին ապստամբության դրդող բարձրացնելու մեջ, բայց մինչ աթաբեկի դեմ դավեր էր նյութում, հիվանդանում է ու մեռնում[27]։

1247—1248 թթ. դեպքերը նախերգանքն էին 1249 թ. ավելի բուռն իրադարձությունների։ Նշենք, որ 1248 թ. Ղարաղորումից վերադարձել էին երկու Դավիթ թագավորները[28]։ Եվ հենց նրանցից մեկը՝ Դավիթ Նարինը, գլխավորեց պայքարը թշնամու դեմ։

1249 թ. անցքերին անդրադառնալով Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ հանկարծակի «...խորհուրդ արարեալ ամենայն աւագանին թաթար զօրուն, վառեցան ղինու և կաղմեցան առ հասարակ կոտորել զաշխարհս Հայոց և Վրաց՝ զհնաղանդեալս իւրեանց, վասն այսպիսի պատճառի, թէ ապստամբել կամի թագաւորն Վրաց ամենայն իշխանօքն, և զօրաժողով են գալ կոտորել զնոսա, քանզի երևէր իսկ, զի զօրաժողով եղեն ամենայն իշխանքն առ թագաւորն վրաց Դաւիթ ի Տփղիս»[29]։ Կիրակոս Գանձակեցին և Գրիգոր պատմիչը վկայում են, որ հավաքի ժամանակ իշխաններից ոմանք հաշվել են իրենց տրամադրության տակ եղած զորքը և եզրակացրել, որ այն բավական է մոնղոլներին հաղթելու համար[30]։ Սակայն ապստամբությունը բարձրացնելուն դեմ էր Ավագ Զաքարյանը[31]։

Ինչո՞վ բացատրել երկրի աթաբեկի ու ամիրսպասալարի՝ քաղաքական մեծ կշիռ ունեցող այդ իշխանի, նման դիրքորոշումն ապստամբության նկատմամբ այս ժամանակ։ Հավանաբար այստեղ կարևոր նշանակություն է ունեցել նախ Ավագ Զաքարյանի գրված կարևոր դիրքը մոնղոլների մոտ և ապա նրա համոզմունքը, որ ապստամբությունը հաղթական վախճանի չի հանգելու և անպայման տեղիք է տալու մոնղոլների կողմից նորանոր ասպատակությունների ու հալածանքների։

Խորհրդակցության մասնակիցների միջև միասնություն չկար։ Դեռ ավելին, նրանց մեջ հայտնվեց մի դավաճան, որը մոնղոլներին տեղեկացրեց նախապատրաստվող ապստամբության մասին[32]։ Յու. Սիխարուլիձեն հավաստի

---

24 Կիրակոս Գանձակեցի, էջ 313։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 313—314։

27 Նույն տեղում, էջ 314։

28 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի. Երևան, 1942, էջ 26։ Վրաց ժամանակագրություն, էջ 100։

29 Կիրակոս Գանձակեցի, էջ 319։

30 Նույն տեղում։ Գրիգոր պատմիչ, էջ 20—21։

31 Կիրակոս Գանձակեցի, էջ 319—320։

32 Գրիգոր պատմիչ, էջ 20—21։

չի համարում պատմիչի այս վկայությունը և նշում է, թե դավադիրների ձախողումը ավելի արդարացի կերպով է բացատրում Վարդան Բարձրբերդցին (Արևելցին—Հ. Ս.)՝ այն կապելով մոնղոլական ռազմական իշխանությունների զգոնության հետ[33]։ Տեղեկանալով նախապատրաստվող ապստամբության մասին, մոնղոլները սկսեցին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այն խեղդելու համար։ Կիրակոս Գանձակեցու վկայության համաձայն, երբ իշխանական զորքերն արդեն հեռացել էին Տփղիսից, մոնղոլները ձերբակալեցին տեղում մնացած իշխաններին, իսկ մյուսներին հրամայեցին ներկայանալ իրենց[34]։ Սակայն շուտով ձերբակալված իշխաններին ազատ են արձակում և այդ գործում մեծ նշանակություն է ունենում մոնղոլ հրամանատարության հետ լավ փոխհարաբերությունների մեջ գտնվող Ավագ Զաքարյանի միջնորդությունը։ Այս տեսակետից հետաքրքիր և արժանահավատ վկայություններ են պահպանել հայկական աղբյուրները։ Այսպես, Գրիգոր պատմիչը վկայում է, որ մինչ Ավագի գալը մյուս իշխաններն ու թագավորը փորձեցին միջնորդել, բայց ապարդյուն[35]։ Համաձայն նույն հեղինակի՝ Ավագը, որն այդ ժամանակ հիվանդ էր և նույնիսկ ձի չէր կարող նստել, այնուամենայնիվ ներկայացավ մոնղոլ զորահրամանատարներին և համոզեց նրանց դադարեցնել երկրում մոլեգնող ասպատակությունները ու գերեվարությունները[36]։

Կիրակոս Գանձակեցին իր հերթին վկայում է, որ Ավագը ներկայացավ մոնղոլներին, ապացուցեց իր անմեղսակցությունը, ապա միջնորդեց կալանավորված իշխաններին ազատելու համար, որն էլ իրականացվեց՝ մեծ փրկագնի միջոցով միայն[37]։

Ավագն, անշուշտ, ձերբակալված իշխաններին ազատելու հարցում օգտագործել է իր լավ հարաբերությունները մոնղոլ Զաղաթայ զորավարի հետ։ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ «մի ոմն յաւագ գլխաւորացն, որ զօրավար էր ամենայն զօրուն, Զաղատայ անուն նորա, որ բարեկամն էր Աւագին, եկաց ի մէջ վառեալ զօրացն և ասէ ցնոսա. «Մեք ոչ ունիմք հրաման ի ղանէն կոտորել զայնոսիկ, որ հնազանդեալ են մեզ և կան մեզ ի ծառայութեան և հարկատուք են ղանին. և իրք ապստամբութեան նոցա չէ ճշմարտեալ։ Արդ՝ եթէ կոտորէք զնոսա առանց պատճառի, դուք տայք պատասխանի ղանին»։ Եւ լուեալ զայս, դադարեցան ստուգել զիրն»[38]։

Չպետք է կարծել, թե Զաղաթայ զորավարն այնքան կարևոր է համարել իր և Ավագի բարեկամական հարաբերությունները, որ սոսկ դրա համար նըպաստել է կալանավորված իշխանների ազատմանը։ Այստեղ խնդիրն ավելի խորն է, և Զաղաթայ զորավարի այսպիսի դիրքորոշումը նրանց նկատմամբ կարելի է բացատրել մի կարևոր հարցի հետ կապված։ Խոսքը թաթար-մոնղոլների մոտ գոյություն ունեցող քաղաքական երկու տենդենցների մասին է։ Այդ հարցը հանգամանորեն պարզաբանել է սովետական հայտնի արևելագետ Ի. Պ. Պետրուշևսկին։ Մոնղոլական պետականության ձևավորման ժամանակից ի վեր, քոչվոր ավագանու մեջ ձևավորվեցին քաղաքական երկու տենդենցներ, որոնցում էլ արտացոլվում էր նրանց վերաբերմունքը նվաճված երկրների ու ժողովուրդների նկատմամբ։

Առաջին ուղղությանն էր պատկանում մոնղոլական և նրանց միացած թյուրքական ռազմաքոչվորական ավագանու մեծ մասը։ Դրանք մոնղոլական քոչվորական կենցաղի, կիսատոհմատիրական կարգի և տափաստանային ավանդույթների համակիրներն էին, որոնք դեմ էին նստակյաց կյանքին ու հողա-

---

33 Ю. Сихарулидзе. Указ. соч., с. 28.

34 Կիրակոս Գանձակեցի, էջ 319։

35 Գրիգոր պատմիչ, էջ 21։

36 Նույն տեղում։

37 Կիրակոս Գանձակեցի, էջ 320։ Թվում է, այս հարցին է վերաբերում 1249 թ. թողնված հետևյալ արձանագրությունը. «...ի ժամանակս թաթարին, ի տերութեանն մեծ խաղաղաբար Աւագին...» (ընդգծումը մերն է—Հ. Ս.) (Դիվան, պրակ V, էջ 93)։

38 Կիրակոս Գանձակեցի, էջ 320։

գործությանը։ Նրանք քաղաքների, տեղական բնակչության անսահմանափակ շահագործման կողմնակիցներ էին։

Երկրորդ ուղղությանն էր պատկանում ռազմաքոչվորական ավագանու փոքրամասնությունը, որը ձգտում էր ստեղծել ուժեղ կենտրոնական պետություն։ Դրա համար անհրաժեշտ էին խանական իշխանության միջամտում նվաճված երկրների ֆեոդալական վերնախավին, քաղաքային կյանքի, առևտրի, գյուղատնտեսության հովանավորություն, նվաճված երկրների արտադրողական ուժերի վերականգնում, մի բան, որը դեմ էր նվաճված երկրներում ավելորդ և չափից ավելի ասպատակություններին ու հալածանքներին[39]։

Անդրկովկասում քաղաքական այս երկրորդ տենդենցի ներկայացուցիչն էր Չաղաթայ զորավարը։ Սակայն առաջին ուղղության ներկայացուցիչները իրենց բավարարված չէին զգում։ Ու թեև մեծ փրկագնով ազատ արձակեցին ձերբակալված իշխաններին, բայց, այդուհանդերձ, սկսեցին ասպատակել Հայաստանի և Վրաստանի տարբեր գավառները[40]։ Այս հարցում կարող է որոշակի դեր խաղացած լինել Դավիթ Նարին թագավորի փախուստը կալանավայրից՝ Զաղեձորից[41]։

Պատմագիտության մեջ 1249 թ. վրաց-հայկական ընդվզումը մերթ համարվել է ապստամբություն, մերթ՝ դավադրություն, մերթ՝ ապստամբության փորձ։ Այսպես, Իվ. Ջավախիշվիլին գտնում էր, որ 1249 թ. ապստամբական ելույթներ եղել են[42]։ Ն. Բերձենիշվիլին, անդրադառնալով 40-ական թվականների հակամոնղոլական ելույթներին, դրանք բնութագրում է որպես դավադրություններ[43]։ Հասկանալի է, որ դա վերաբերում է նաև 1249 թ. անցքերին։ Հ. Մանանդյանն իր հերթին գրում է. «Դավադրության այս փորձը մոնղոլական զորքին առիթ ծառայեց վերսկսելու կողոպուտները, ավերածությունները և կոտորածները, գլխավորապես, Սամցխեում և վրացական այլ գավառներում, որոնց մի մասը ապստամբել էր։ Նրանք ավերեցին նաև Հայաստանի մի քանի շրջանները»[44]։ Լ. Խաչիկյանը, անդրադառնալով Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի խրատական թղթին, գտնում է, որ «...1249 թ. Հյուսիսային Հայաստանի շրջաններում ու Վրաստանում մոնղոլական տիրապետության դեմ բռնկվում է ապստամբություն»[45]։ Լ. Բաբայանն այս հարցի առթիվ գրում է. «Վարդան Վարդապետի և Վրաց Անանուն պատմիչի վկայություններից, մեր կարծիքով, պարզ երևում է, որ թերևս վրաց և հայ ֆեոդալները ապստամբելու մասին սոսկ որոշումով չեն սահմանափակվել, ինչպես ասում են Կիրակոս

---

39 И. П. Петрушевский. Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков. М.—Л., 1960, с. 48—53.

40 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդան Արևելցի), էջ 148։ Գրիգոր պատմիչ, էջ 21։

41 Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 406—408։ Ստեփանոս Օրբելյանի սույն վկայությունն է թույլ տալիս կարծելու, որ 1249 թ. պայքարը ղեկավարել է Դավիթ Նարինը։ Այդ պատճառով էր նա ձերբակալվել ու բերվել Զագեձոր։ Իսկ այն, որ ապստամբության նախապատրաստությունը տեղի է ունեցել Տփղիսում, ոչնչով չի հակասում վերն ասվածին, որովհետև Ղարաղորումից ետ դառնալուց հետո երկու Դավիթ թագավորների էլ Ավագի միջնորդությամբ սկզբնապես Տփղիսում գահ բարձրացրին և օրենքներն ու հրովարտակներն էլ երկուսի անունից էին հրապարակվում (Վրաց ժամանակագրություն, էջ 101։ Կիրակոս Գանձակեցի, էջ 317)։ Հետևաբար Տփղիսում նախապատրաստված ապստամբության ղեկավարը կարող էր լինել հենց Ռուսուդանի որդին, մանավանդ, որ Բաշուն հովանավորում էր Ուլու Դավթին։

42 ივ. ჯავახიშვილი, III, გვ. 141.

43 Н. Берденишвили. Указ. соч., с. 8.

44 Հ. Մանանդյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1977։ Կարծում ենք, որ հայրենիքի ազատագրման նպատակով նախապատրաստվող զինված ելույթը չպետք է բնութագրել «դավադրություն» վարկաբեկիչ բառով։

45 Լ. Խաչիկյան. Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան 1251 թվականին.—«Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 271։

Գանձակեցին և Գրիգոր պատմիչը (Մաղաքիա), այլ դիմել են կոնկրետ քայլերի, որպիսի հանգամանքը առիթ է ծառայել նվաճողների կողմից նորանոր ավերածությունների ու կոտորածների»[46]։ Յու. Սիխարուլիձեն 1249 թ. քաղաքական ելույթը անվանում է դավադրություն[47]։ Պատմագիտության մեջ այն հաճախ համարվում է սոսկ ապստամբության փորձ[48]։

Մեզ հիմնավոր է թվում այն տեսակետը, ըստ որի ապստամբության նախապատրաստումը չի սահմանափակվել նախնական քայլերով, այլ վերաճել է կոնկրետ գործողությունների, որպիսի հանգամանքն էլ հալածանքների ու ասպատակությունների տեղիք է տվել։ Հարկ է ավելացնել, որ միայն Վարդան Արևելցու վկայությունը չէ, որ նման կարծիքի հիմք է դառնում[49]։ Այդ մասին կոնկրետ ակնարկ ունեն նաև Անանուն ժամանակագիրն ու Կիրակոս Գանձակեցին։ Վերջինս, երբ խոսում է ապստամբ իշխաններին փրկագնով ազատելու մասին, ավելացնում է, որ դրանից հետո մոնղոլները «...ինքեանք յարձակեցան ի կողմանս Վրաց ի վերայ բազում գաւառաց, ո՛րք ապստամբք (ընդգծումը մերն է—Հ. Ս.) և ո՛րք ոչ, և զբաղումս կոտորեցին և զևս բազմագոյնս գերի վարեցին»[50]։

Անանուն ժամանակագիրն իր հերթին վկայում է, որ 1249 թ. Բաչուն և մյուս մոնղոլ հրամանատարները ստացան վրաց թագավորի ու իշխանների ապստամբության լուրը[51]։

1249 թ. Խաչենի վիմական արձանագրություններից մեկում տեղեկություն կա այն մասին, որ մեծ իշխան Հասան-Ջալալի, նրա որդի Աթաբակի և ուրիշ այլ իշխանների հետ միաբանել էին նաև իրենց զորքերը[52]։ Նկատի առնելով, որ հայ վիմագրության ամբողջ պատմությունը այսօրինակ միաբանության ոչ մի փաստ չունի, կարելի է մտածել, որ ապստամբության օրերին երկրամասի զորքն ու իշխանները հանդես են եկել անսովոր կերպով միավորված։ Հասկանալի է, որ այս միասնությունը պատասխանը կամ արդյունքն էր մոնղոլների նախորդ վայրագությունների։

Մեր պատկերացումները վրաց-հայկական առաջին ապստամբության և առանձնապես նրա հզորության մասին թերի կմնան, եթե չանդրադառնանք Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի՝ 1251 թ. Հայաստան առաքած խրատական թղթին[53]։

Նշված պատմական աղբյուրից մենք պատկերացում ենք կազմում և՛ մոնղոլների դեմ բռնկված ապստամբության փաստի, և՛ կիլիկյան հայ գործիչների՝ դեպի ապստամբությունն ունեցած վերաբերմունքի մասին։ Կոստանդին կա-

46 Լ. Բարայան. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դ.-ում. Երևան, 1964, էջ 261։

47 Ю. Сихарулидзе. Указ. соч., с. 28.

48 Հայ ժողովրդի պատմություն. հ. II, Երևան, 1965, էջ 189։ Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1975, էջ 585։

49 Վրաց ժամանակագրի տեղեկությունը վերաբերում է 1247 թ. անցքերին։ Առհասարակ պետք է նշել, որ պատմագիտության մեջ մի շարք պատմաբաններ (Լ. Բարայան, Ն. Շոշիաշվիլի), ինչպես արդեն նկատվել է (տե՛ս գ. მაისურაძე. ქართველი და სომეხი ხალხების ურთიერთობა XIII—XVIII საუკუნეებში, თბ. 1982, გვ 105) Կոխտասթավիի հավաքի վերաբերյալ վրաց աղբյուրի հաղորդած տեղեկությունները վերագրե՝ են 1249 թ. ապստամբությանը։ Ըստ Ա. Շահնազարյանի, Կոխտասթավիի հավաքը տեղի է ունեցել 1245 թ. և կապված է վրացական պետությունում ավատական ներհակությունների խորացման հետ։ Թեև, քիչ անց, հեղինակը նույն հավաքի վերաբերյալ վրաց ժամանակագրի հաղորդած տեղեկությունը՝ կապված Վահրամ Գագեցու հետ, վերագրում է 1249 թ. ապստամբությանը (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 12, էջ 35—38)։

50 Կիրակոս Գանձակեցի, էջ 320։

51 Անանուն ժամանակագրություն, առաջաբանով և ծանոթագրություններով, կազմեցին Հով. Մանվելյան, Հար. Արրահամյան. Երևան, 1940, էջ 21։

52 Դիվան, պրակ V, էջ 88—89։

53 Տե՛ս Լ. Խաչիկյան. նշվ. աշխ., էջ 279—284։

թոդիկոսի խրատականից մենք տեղեկանում ենք նաև այն վայրագությունների մասին, որ գործել են օտար բռնակալները ապստամբության ժամանակ[54]։ Կոստանդին Բարձրբերդցին, ելնելով քաղաքական որոշակի նկատառումներից՝ մոնղոլների հետ Կիլիկիայի դաշն կնքելու մտադրությունից, կոչ է անում հնազանդվել և չըմբոստանալ մոնղոլների դեմ[55]։ Սակայն կաթողիկոսի այդ կոչը հենց ինքնին վկայում է այն պայքարի դոլության մասին, որը եղել էր բուն Հայաստանում 1249 թ., և որն այդքան անհանգստացրել էր Կոստանդին կաթողիկոսին։

Բայց կաթողիկոսի հորդորները ընդունելի չէին բուն երկրի թե՛ բնակչության, թե՛ ֆեոդալ իշխողների մեծ մասի համար, քանզի այլ էր դրությունը նրանց մոտ՝ համեմատած Կիլիկիայի հետ։ Եվ բոլորովին պատահական չէ, որ մի որոշ ժամանակ անց՝ 1259 թ. այստեղ բռնկվում է մի նոր ու ավելի հզոր ապստամբություն։

Մոնղոլական տիրապետության դեմ վրաց-հայկական առաջին ապստամբությունը պարտություն կրեց։ Դրա պատճառն այն է, որ ապստամբ ֆեոդալների միջև միտնություն չկար։ Ապստամբությանը մասնակցում էին ոչ բոլոր ֆեոդալները։ Հատկապես բացասաբար անդրադարձավ նաև երկրի աթաբեկ և ամիրսպասալար Ավաղ Զաքարյանի հրաժարումն ապստամբելուց։ Ապստամբությունը չվերաճեց կազմակերպված համաժողովրդական մեծ պայքարի, ժողովուրդն անհրաժեշտ ակտիվությամբ չներգրավվեց շարժման մեջ։

1247—1249 թթ. վրաց-հայկական ընդվզումները բողոքի լուրջ արտահայտություն էին թաթար-մոնղոլ տիրապետողների բռնությունների ու կամայականությունների դեմ։ Դրանք նաև մոնղոլական ծանր լուծը թոթափելու և երկրի քաղաքական ինքնուրույնությունը վերականգնելու նպատակ էին հետապնդում։ Այդ իսկ առումով այն իր նշանակալից տեղն ունի հակամոնղոլական պայքարի պատմության մեջ։

ГРУЗИНО-АРМЯНСКИЕ ВОССТАНИЯ 1247—1249 гг. ПРОТИВ ТАТАРО-МОНГОЛЬСКОГО ДЕСПОТИЗМА

Г. А. СТЕПАНЯН

Резюме

Опираясь на ценные указания предыдущих исследователей и используя новые материалы источников, мы стремились выявить цельную историю грузино-армянских восстаний 1247—1249 гг. Исследованы цель и подробности Кохтаставского собора грузинских и армянских феодалов в 1247 г., причины провала намеченного восстания, как и дальнейшее усиление недовольства грузин и армян против татаро-монгольского ига, вооруженные столкновения в 1248 г., первое массовое и организованно проведенное восстание в 1249 г.

Восстания против татаро-монгольского деспотизма 1247—1249 гг. ударили по основам чужеземного владычества и преследовали цель восстановить политическую независимость обеих стран. И хотя в этот период грузинскому и армянскому народам не удалось достичь своих целей, борьба показала, что они не потеряли веры в свободу и были готовы к новой борьбе и испытаниям. А это в сложившейся обстановке было самое главное.

---

54 Նույն տեղում, էջ 280։

55 Նույն տեղում, էջ 273, 279—282։